Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

23/4119/ 9 փետրվարի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224

## Ա

## Հետդարձի ճանապարհ չկա

Ինչպես այս, այնպես էլ բոլոր նախորդ ընտրությունների ժամանակ մեր մի շարք գործընկերներ՝ լրագրողներ, առաջադրվում են եւ հաճախ նաեւ ընտրվում են ԱԺ պատգամավորներ: Բնականաբար, հարց է ծագում՝ ինչպես դրան վերաբերվել: Արդեն առիթ եմ ունեցել ասելու, որ այդ աշխատանքը (իսկ դա պետք է լինի աշխատանք, ոչ թե լոպազանալու եւ «տանիք գտնելու» միջոց, ինչպես կարծում է ներկայիս պատգամավորների մեծ մասը) անձամբ ինձ չի հետաքրքրում: Ի դեպ, միանգամից նշեմ, որ ինձ բացարձակապես չի հետաքրքրում նաեւ «Հ1»-ը ղեկավարելը, որտեղ գործընկերներից ոմանք ինձ «նշանակել են»: Բայց ընդհանուր առմամբ այն, որ լրագրողները պատգամավոր են դառնում, նորմալ, նույնիսկ դրական երեւույթ է: Ո՞ր պատգամավորն է գերադասելի՝ Կարամելի Հարութը, Պիվի Հակոբը, Սասի Արտակը, թե՞, ասենք, Նաիրա Զոհրաբյանը կամ Արամ Սաֆարյանը: Բնականաբար, գրագետ, իրենց կարծիքը ձեւակերպող մարդիկ ավելի պիտանի են օրենսդիր գործունեության համար: Ժամանակին լրագրությունից քաղաքականություն էին գնացել պատերազմում զոհված Սամվել Շահմուրադյանը, ինչպես նաեւ Սամվել Գեւորգյանը, Աղվան Վարդանյանը, Ռուբեն Հակոբյանը, շատ ուրիշներ: Կարծում եմ՝ քաղաքականությունը դրանից միայն շահեց:

Այստեղ կա միայն մի խնդիր. անցումը լրագրությունից քաղաքականություն միանգամայն ընդունելի է, անընդունելի է մեկ այլ բան՝ դրանց համատեղումը: Բարեբախտաբար, վերը թվարկած նախկին գործընկերներս նման համատեղությամբ չէին զբաղվում եւ չեն զբաղվում: Ինչումն է այստեղ խնդիրը: Ենթադրենք, ես հաղորդում եմ վարում, հարցազրույց եմ վերցնում կամ գրում եմ այս տողերը եւ միաժամանակ որեւէ կուսակցության ցուցակում ցանկանում եմ պատգամավոր դառնալ: Արդյոք ընթերցողի կամ հեռուստադիտողի մոտ հարց չի՞ առաջանա՝ այն, ինչ որ դու ասում ես, գրում ես կամ հարցնում ես, դու անում ես քո՞ կողմից, թե՞ քո կուսակցության: Չգիտեմ՝ ում համար ինչպես, բայց իմ տեսանկյունից կուսակցական, քաղաքական հավակնություններ ունեցող լրագրողի խոսքը այդ կասկածների արդյունքում դառնում է պակաս արժանահավատ: Դա բացահայտորեն կամ թաքնված ձեւով դրսեւորվում է կամ գոնե ընկալվում է որպես այս կամ այն քաղաքական ուժի «ագիտպրոպ»: Ինձ կարող են առարկել, որ կարելի է նաեւ չընդգրկվել որեւէ ցուցակում եւ համոզմունքներից ելնելով կամ փողի դիմաց դարձյալ զբաղվել «ագիտպրոպով»: Դա արդեն լրագրողի խղճի հարցն է: Տվյալ դեպքում մենք խոսում ենք նորմալ, բարեխիղճ լրագրության մասին, որը, սակայն, կուսակցական ցուցակի պատճառով ընկալվում է որպես ոչ բարեխիղճ:

Մի խոսքով, լրագրողները որոշակի ռիսկի են դիմում, երբ ընդգրկվում են այս կամ այն ընտրացուցակներում: Որովհետեւ եթե նրանք պատգամավոր չդառնան, այդ փորձը, միեւնույն է, իրենց գրածը վիճարկելու առիթով «երեսով են տալու»: Եթե գնում եք քաղաքականություն, գնացեք՝ կանաչ ճանապարհ: Բայց իմացեք՝ հետդարձի ճանապարհ չկա:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Գյումրու քաղաքապետը մարզպետի ասածը չարե՞ց





Շիրակի մարզպետ Աշոտ Գիժիրյանը երեկ իր վարչության պետերի հետ մեկնել էր Ախուրյանի շրջանի Ոսկեհասկ գյուղ՝ աշխատանքային խորհրդակցություն անցկացնելու: Մարզպետին ուղեկցող լրագրողները, միաբերան դժգոհելով Գյումրու ձյունախեղդ եղած, անանցանելի փողոցներից, հետաքրքրվեցին, թե ով է դրա համար պատասխան տալու. կես մետր ձյուն է նստել, սակայն Գյումրու քաղաքապետարանը դրանք մաքրելու ուղղությամբ բացարձակապես աշխատանքներ չի կատարում: «Առավոտյան ես դրանով զբաղվել եմ, ասեմ, որ ամեն օր եմ զբաղվում, հիմա՝ ես պահին, կարծում եմ, փողոցները մաքրվում են, հետ գնալուց պետք է ահագին տեղ մաքրած լինեն, միասին կշրջենք, կտեսնենք»,- վստահեցրեց մարզպետը: Սակայն Ոսկեհասկից վերադառնալուց հետո շրջեցինք ու տեսանք նույն խայտառակ պատկերը: Պատահական չէ, որ Գյումրու հեռուստաեթերը երեկ լցված էր քաղաքապետարանի անգործությունը ֆիքսող կադրերով ու գյումրեցիների բողոքներով:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Ո՞վ է գլխավորելու ՀՀԿ ցուցակը

«Իրականում չափազանց կարեւոր է, թե մեր կուսակցությունը ինչ գաղափարներով է գնում ընտրությունների, եւ մեր քաղաքացիները էլ հետեւելու են մեր ծրագրային դրույթներին, թե մենք ինչ ենք առաջարկում մեր ընտրողներին, ինչպիսի փոփոխություններ, ինչպես ենք բարելավելու մեր ժողովրդի կյանքը, իսկ թե ով կլինի առաջինը կամ երկրորդը ցուցակում՝ ես անձամբ, անկեղծ ասած, չեմ կարեւորում»,- պատասխանելով հարցին՝ ով է գլխավորելու ՀՀԿ ցուցակը, եւ ովքեր են լինելու երկրորդ եւ երրորդ տեղերում, ասաց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Կարդացեք էջ 2:

### Ընդդիմությանը ձերբակալություններով չեն վախեցնի

«Ընդդիմությանը չեն կարող երբեւէ զսպել: Ուզում են ասել՝ եթե դուք ինչ-որ բան մեր սրտով չանեք՝ մենք բազմաթիվ մեթոդներով կարող ենք ձեզ ազատությունից զրկել: Դրանով մեզ իրենք չեն վախեցնի»,- «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով վերջին շրջանում ոստիկանության գործունեությանը՝ ասաց «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սմբատ Այվազյանը:

Կարդացեք էջ**D**3:

### ՌԴ նախագահին քաղբանտարկյալների ցուցակ են ներկայացրել

Ռուսաստանյան ընդդիմության ներկայացուցիչները երեկ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի գրասենյակ են ներկայացրել այն մարդկանց ցուցակը, ովքեր, ըստ իրենց, քաղբանտարկյալներ են եւ պետք է ազատ արձակվեն: Ցուցակում 39 հոգի են՝ այդ թվում Միխայիլ Խոդորկովսկին, Պլատոն Լեբեդեւը, «Դրուգայա Ռոսիա» կուսակցության ակտիվիստ Թաիսիա Օսիպովան: Ըստ «Ազատություն» ռ/կ-ի՝ քաղբանտարկյալների ազատ արձակումը փետրվարի 4-ին անցկացված հանրահավաքի հիմնական պահանջներից էր:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 13-ին, «Հայելի» ակումբի հյուրերն են Արտակ Դավթյանը (ՀՀԿ) եւ Զոյա Թադեւոսյանը (ՀԱԿ):

### Եղանակ

Երեւան -9 +1, Շիրակ -21 -3, Կոտայք -17 -3, Գեղարքունիք -17 -3, Լոռի -16 -2, Տավուշ -13 0, Արագածոտն լեռներ -21 -3, Արագածոտն նախալեռն. -10 +1, Արարատ -10 +1, Արմավիր -10 +1, Վայոց Ձոր լեռներ -21 -3, Վայոց Ձոր նախալեռն. -9 +2, Սյունիքի հովիտներ -8 +2, Սյունիքի նախալեռներ -11 +1, Արցախ -7 +2

## ՀՀԿ ցուցակում գործարարներ չեն լինելու

«Հանրապետական կուսակցության ցուցակում ձեռներեցներ չեն լինելու»,- երեկ պատասխանելով հարցին՝ կլինե՞ն գործարարներ ՀՀԿ ցուցակում, ասաց վարչապետ Տիգրան Սարգսյանը: Վարչապետը նաեւ ասաց. «Հայտնի բիզնեսմեններ մեր կուսակցության ցուցակում այլեւս չեն լինելու, եւ այդ քաղաքական դիրքորոշումը հանրապետության նախագահը հստակ հայտնել է»:

## Կրակոցներ Գյումրու թիվ 7 դպրոցի բակում

Մեր տեղեկություններով՝ երեկ Գյումրու թիվ 7 դպրոցի 12-րդ դասարանի երկու աշակերտների միջեւ դպրոցի ներսում թունդ ռազբորկա է սկսվել, որը շարունակվել է դպրոցի բակում ու ավարտվել է կրակոցներով: Վիճաբանողներից մեկը եղել է դպրոցի ուսմասվարի որդին՝ Արթուրը, ով եւ հանել է գազային ատրճանակը ու կրակել համադասարանցուն՝ Լեւոնին: Թեեւ գազային ատրճանակն ավելի շատ վախեցնող զենք է համարվում, սակայն, ըստ ականատեսների, մազ էր մնացել, որ վնասեր Լեւոնին: Փամփուշտն անցել է տղայի այտի կողքով, սակայն նա, բարեբախտաբար, վնասվածք չի ստացել: Մեր տեղեկությունները, ըստ էության, չհերքեցին մարզի իրավապահները՝ խոստանալով մանրամասներ հայտնել այսօր: Ի դեպ, մեզ լուրեր են հասել, որ հերոսներից երկուսն էլ հայր չունեն: Երեկ այս դպրոցի երեխաներին ամբողջ օրը քննում էին Գյումրու ոստիկանությունում, ոստիկանություն է հրավիրվել նաեւ դպրոցի տնօրեն, հանրապետական Գագիկ Կարապետյանը, ով պնդել է, թե դեպքը տեղի է ունեցել դասերից հետո, դպրոցից դուրս: Կատարվածի մասին ավելի մանրամասն՝ առաջիկայում:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## «Տաշիր» բարեգործական հիմնադրամի նպատակը PR-ը չէ

Երեկ մամուլում լուր էր տարածվել այն մասին, որ ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Կարեն Կարապետյանը PR խումբ է հավաքում, նշված էր նաեւ, որ պարոն Կարապետյանը, ակտիվացնելով «Տաշիր» ԲՀ-ի գործունեությունը, նպատակ ունի բարձրացնել իր քաղաքական իմիջը: «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ Մարիաննա Քաբաբյանն այս կապակցությամբ ասաց. «Ինչպես արդեն բազմիցս նշվել է, «Տաշիր» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է դեռեւս 1990-ականներին եւ մինչ այսօր 90 մլն դոլարի բարեգործական ծրագրեր է իրականացրել ՀՀ տարածքում: Այսպիսով, չի կարելի հիմնադրամի գործունեությունը որեւէ կերպ կապել PR-ի հետ: PR խմբի մասին կխոսի հենց պարոն Կարապետյանը, սակայն չեմ կարծում, որ նա, տասնամյակներ շարունակ լինելով քաղաքական դաշտում, ունի իմիջի բարձրացման կարիք: Կարեն Կարապետյանն արդեն ճանաչված է այս ոլորտում իր հավասարակշռությամբ եւ ազնիվ աշխատանքով: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնության հետ կապերին, ասեմ, որ այսքան տարի պարոն Կարապետյանի առաջնահերթ նպատակն է եղել լինել մեր պետության կողքին եւ ինչու չէ՝ հենց բարեգործական ծրագրերով ու նախաձեռնություններով սատարել պետությանն ու քաղաքացուն»:

Մ. Ե.

# «Խնդիրը կքննարկենք քաղաքական դաշտում»

## Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ պատասխանեց լրագրողների հարցերին




ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը խորհրդարանում պատասխանելով հարցին՝ ի՞նչ է մտածում «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» օրինագծի քվեարկության տապալման եւ ԲՀԿ-ի այն պնդումների մասին, թե այդ օրինագիծը հարվածում է աղքատ խավին, ասաց. «Առաջինը, որ դա խփում է աղքատ խավերին, բացարձակ սուտ էր. այս օրենքի նպատակն է կանխիկ խոշոր շրջանառությունը դարձնել վերահսկելի եւ թափանցիկ, եւ խոսքը երեք միլիոնից ավելի գործարքների մասին է, իսկ մեր բնակչության 95 տոկոսը տարվա ընթացքում ընդհանրապես նման գործարքներ չի անում: Եթե ՀՀ քաղաքացին խանութից ձեռք է բերում կահույք, որի արժեքը 3 միլիոն դրամից բարձր է, ապա նա պարտավոր է այդ կահույքը ձեռք բերել անկանխիկ, որպեսզի հետագայում հնարավոր լինի վերահսկել այդ գործարքից ստացված եկամուտը, եւ որպեսզի տվյալ խանութը բոլոր գործարքները ներառի իր հաշվետվության մեջ, եւ որպեսզի վճարվեն բոլոր հարկերը: Ստվերային տնտեսության դեմ պայքարի ամենաարդյունավետ ձեւը հենց կանխիկ շրջանառության նվազեցումն է խոշոր գործարքների ժամանակ: Այս օրենքի նպատակը սա է: Այն պատճառաբանությունները, որ սա ուղղված է ֆինանսական համակարգի հարստացմանը, բանկերի հարստացմանը, բացարձակապես իրականությանը չեն համապատասխանում, հակառակը՝ այս օրենքը բեռ է դնում բանկերի վրա, որովհետեւ պարտադրում է բանկերին, որ նրանք իրենց սեփական միջոցների հաշվին տեղադրեն տերմինալներ եւ այդ սպասարկումը իրականացնեն անվճար»:

ԲՀԿ-ի մասին վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ ոչ մի թթու խոսք չասաց, փորձեց առավել կոռեկտ լինել. «Ուզում եմ նշել, որ մենք մեր գործընկերների եւ ընդդիմախոսների հետ պետք է լինենք խիստ ընդգծված հարգալից, եւ մեր վերաբերմունքն էլ հենց այդպիսին է: Մեր գործընկերները ցանկանում են կարեւորել այս հարցը եւ օգտագործում են այն գործիքները, որ ունեն, եւ մենք շատ հարգալից ենք վերաբերվում ցանկացած քաղաքական ակցիայի, որ մեր գործընկերները իրականացնում են, բնականաբար՝ մենք էլ մեր հերթին փորձում ենք պատասխանել այդ ակցիաներին, մասնավորապես, ինձ թվում է՝ ամենալավ գնահատականը այդ ակցիային տվեց ԱԺ-ն՝ իր բնականոն աշխատանքով եւ տասից ավելի ընդունած օրինագծերով»: Հարցին՝ դարձյալ ետ կբերվի՞ այդ օրինագիծը, Տիգրան Սարգսյանն ասաց. «Կարծում եմ՝ այսօր այդ հարցը գտնվում է քաղաքական դաշտում, որովհետեւ օրինագծի վերաբերյալ որեւէ գրավոր կամ բանավոր առաջարկություն չի հնչել Ազգային ժողովում, որ այդ օրինագծի այս կամ այն հոդվածը պետք է վերանայել կամ փոխել, այդպիսի դիտողություններ եւ առաջարկություններ մենք չենք ստացել: Դա նշանակում է, որ հարցը տեղափոխվել է քաղաքական դաշտ, եւ դա նշանակում է, որ մենք կքննարկենք այդ խնդիրը քաղաքական դաշտում»:

Հարցին նաեւ, թե ինչով է պայմանավորված ռուսաստանյան պաշտոնյաների ակտիվ այցերը Հայաստան, եւ արդյոք այդ այցերը կապ ունե՞ն հայաստանյան եւ ռուսաստանյան մոտալուտ ընտրությունների հետ:

Տիգրան Սարգսյանի մեկնաբանությունները այս կապակցությամբ հետեւյալն էին. «Ես այդպես էլ ենթադրում էի, որ մեր գործընկերների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց այցելությունները Հայաստան ներկայացվելու են նախընտրական տրամաբանության ներքո, որ Հանրապետական կուսակցությունը ստանում է աջակցություն իր գործընկերոջից՝ ՌԴ-ից՝ ընտրությունների հարցում: Սակայն պետք է նշեմ, որ եթե ամփոփենք վերջին չորս տարիները, կտեսնենք, որ այդ հարաբերությունները անընդհատ են եղել եւ շատ բնականոն ընթանում են, մասնավորապես՝ միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում տասնյակ հարցեր են քննարկվել եւ այս փուլում էլ արձանագրվել են մի քանի նոր նախաձեռնություններ, որոնք չափազանց կարեւոր են մեզ համար, մասնավորապես ազատ տնտեսական գոտու ստեղծումը»: Վարչապետը նաեւ ասաց, թե կուզեր, որ ՌԴ-ում նախագահական ընտրությունների արդյունքում հաղթեր Վլադիմիր Պուտինը:

Լրագրողներից մեկը հարցրեց, թե շարունակական գնաճի պայմաններում Հանրապետականը ի՞նչ երեսով է կանգնելու ընտրողի առաջ, եւ որտեղի՞ց վստահություն, որ հենց ՀՀԿ-ն է լինելու հաղթող ուժը: Ի պատասխան՝ վարչապետն ասաց. «Առաջին հերթին ուզում եմ ասել, որ այդ վստահությունը գալիս է ժողովրդից, դուք ինքներդ էլ հետեւում եք տարբեր տիպի հարցումների եւ տեսնում եք, թե ինչպիսի վերաբերմունք կա: Իսկ մենք բաց երեսով ենք գնում ընտրությունների, որովհետեւ Հանրապետական կուսակցությունն այս տարիների ընթացքում եղել է ազնիվ, որովհետեւ մենք ինքներս մշտապես խոսել ենք պրոբլեմների մասին, ինքներս ենք բարձրացրել այդ պրոբլեմները, ոչինչ չենք թաքցրել մեր ժողովրդից, եւ մեր բացթողումներն ու հաջողությունները եղել են ձեր խստագույն հսկողության ներքո»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Զինված ուժերը կպահպանեն չեզոքություն



Երեկ ՊՆ վարչական համալիրում պաշտպանության նախարարին լրագրողները խնդրեցին ներկայացնել 2011 թվականի այն պաշտոնյաների թիվը, որոնք պատասխանատվության են ենթարկվել բանակում ոչ կանոնադրային հարաբերությունների արդյունքում արձանագրված մահվան կամ սպանության ելքով հանցագործությունների արդյունքում:

«Այն, ինչ մենք ունեցել ենք 2011 թվականին՝ արդյունք է հրամանատարների քրտնաջան, հետեւողական աշխատանքի, բայց այն թերությունները, պատահարները, որ տեղի էին ունեցել՝ տվյալ զորամասերի եւ ստորաբաժանումների հրամանատարների թերացումների պատճառով էին: Զինված ուժերի ղեկավար կազմից ազատվել են պաշտոններից եւ այսօր քաղաքացիական գործունեության մեջ են շուրջ 10 պաշտոնյաներ՝ վարչության պետի մակարդակով: Շուրջ 30 զորամասի հրամանատարներ են ազատվել պաշտոններից 3,5 տարիների ընթացքում, եւ նրանց տեղը զբաղեցրել են ավելի բանիմաց անձնավորություններ»,- պատասխանեց նախարարը:

Ընտրություններում զինված ուժերի ռեսուրսը օգտագործելու մասին հարցին, թե ինչ գործնական միջոցներ են ձեռնարկվում առաջիկա ընտրություններին նման դեպքերից խուսափելու համար, Սեյրան Օհանյանը պատասխանեց. «ՀՀ զինված ուժերի յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, նրանք ընտրություններին կարող են մասնակցել այնքանով, որքանով որ անհատ քաղաքացիներ են, կարող են համադրել այս կամ այն անձնավորությանը, կուսակցությանը: Ընդհանրացված մասշտաբով զինված ուժերը պետք է պահպանեն չեզոքությունը, մենք մաքսիմալ փորձելու ենք սահմանադրական պահանջները կատարել»:

## «Նախագահը փիլիսոփայորեն է մոտենում հայաստանյան անցքերին»

«Հայաստանի նախագահի հեղինակությունը ապահովված է ե՛ւ Հայաստանի քաղաքական միջավայրում, ե՛ւ, առավել եւս, վերջին տարիներին իմիջը բարձրացել է միջազգային հանրության շրջանում»,- aravot.am-ի հետ զրույցում ասաց ՀՀԿ խմբակցության ղեկավար, ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը՝ չհամաձայնելով քաղաքագետ Լեւոն Շիրինյանի կարծիքին, թե նախագահի ինստիտուտի, նրա հեղինակության բարձրացման խնդիր կա:

Գալուստ Սահակյանի խոսքերով՝ հենց ինքը՝ նախագահն է աշխատել իր իմիջի բարձրացման վրա. «Բավականին խորիմաստ, փիլիսոփայորեն է մոտենում հայաստանյան անցքերին, հիմնական գործոնը հենց ինքը նախագահն է»:

ՀՀԿ փոխնախագահից հետաքրքրվեցինք՝ համամի՞տ է քաղաքագետի հայտարարությանը, թե «Լավ կլիներ, որ հանրապետության նախագահը հանկարծ չգլխավորեր ցուցակը, ինչո՞ւ, որովհետեւ դա անմիջականորեն կդիտվեր ռուսական փորձի պատճենահանում, բնականաբար, չէր գնահատվի եւ նախագահի ինստիտուտը կարժեզրկվեր»: Ի պատասխան՝ ՀՀԿ խմբակցության ղեկավարը ասաց. «Չեմ ուզում հակադարձել, որովհետեւ մեր մենթալիտետն է. ով ինչ մտածում՝ ասում է: Ամբողջ աշխարհում համակարգը քաղաքական կուսակցական է, ինքը կայսրերի դարաշրջանի բաներ է խոսում, սովորաբար, ցանկացած կուսակցության լիդեր գլխավորում է ընտրացուցակը, կուսակցության ընտրացուցակը նրա համար է, որ կուսակցությունն ամբողջովին արտահայտված լինի»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 09.02.2012

# «Բանգլադեշի Համիկին» չեմ էլ ճանաչում»

## «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սմբատ Այվազյանը՝ առաջիկա ընտրությունների մասին



- Երեկ պետք է կայանար Հայ ազգային կոնգրեսի քաղխորհրդի նիստը, որտեղ ՀԱԿ անդամ կուսակցությունները պետք է ներկայացնեին վերջնական մոտեցումները ՀԱԿ-ի համամասնական ցուցակի կազմավորման եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրումների վերաբերյալ: Նիստը հետաձգվեց՝ պատճառաբանությամբ, որ որոշ կուսակցություններ դեռ որոշում չեն կայացրել: Այդքան սկզբունքային եւ վիճելի խնդիրնե՞ր կան, որ կողմնորոշվել չի ստացվում:

- Անկեղծ ասած՝ տեղյակ չեմ, բայց չեմ կարծում, որ պատճառը դա լինի: Դեռ բավականին ժամանակ կա, մինչեւ փետրվարի վերջ-մարտի սկիզբ հանգիստ կարող են քննարկել այդ հարցերը: Չեմ կարծում, որ պատճառը չլուծվող կամ վիճելի հարցերն են:

- Իսկ «Հանրապետություն» կուսակցությունն արդեն հստակեցրե՞լ է ՀԱԿ համամասնական ցուցակում իր ներկայացվածության հարցը եւ մեծամասնական կարգով կուսակցական առաջադրումները:

- Ոչ, «Հանրապետությունը» դեռ քննարկումների փուլում է: Միայն մեկ որոշում ունենք՝ ակտիվորեն մասնակցելու ենք մեծամասնական ընտրակարգը վերացնելուն եւ ԱԺ ընտրությունները համամասնական կարգով անցկացնելուն:

- Վստա՞հ եք, որ դա կհաջողվի այս ընտրություններում:

- Պայքարել պետք է: Պայքարենք՝ տեսնենք՝ ինչ է ստացվում, որովհետեւ դա շատ կարեւոր է մեր երկրի զարգացման, քաղաքական դաշտի կայացման համար:

- Կենտրոնանալով դրա վրա՝ արդյոք առաջիկա ընտրություններում մեծամասնական կարգով ընտրապայքարում չե՞ք թերանա:

- Չեմ կարծում, որովհետեւ հենց այդ պայքարի բովում ենք: Մեծամասնական ընտրակարգը կոռուպցիայի, երկրի քայքայման, երկրի զարգացման ուղղությունը ետ գցելու ճանապարհ է:

- Արամ Սարգսյանը վերջերս հայտարարել էր, որ պատգամավոր դառնալ չի ցանկանում ոչ համամասնական, ոչ մեծամասնական կարգով չի առաջադրելու իր թեկնածությունը: Դուք ՀԱԿ-ի համամասնական ցուցակում Ձեզ տեսնո՞ւմ եք:

- Առայժմ այդ հարցերը քննարկվում են, եւ ես առանձնապես որոշում չունեմ՝ ի՞նչ կարգով մասնակցել ապագա ընտրություններին:

- Իսկ ՀԱԿ-ի ցուցակում «Հանրապետությունից» Դուք ո՞ւմ եք տեսնում:

- Շատ-շատերին: Բայց անունները չեմ ասի, որովհետեւ կուսակցության խորհրդի նիստում այդ հարցերը դեռ քննարկված չեն:

- Իսկ ինչո՞ւ եք հապաղում: Կարծեմ ՀԱԿ անդամ կուսակցություններից միայն «Հանրապետություն»-ում ձեւավորված կարծիք դեռ չունեն վերոնշյալ հարցերի շուրջ:

- Շտապելու խնդիր չենք տեսնում: Եվ, ընդհանրապես, այդ առիթով իմ մոտեցումը ես ասել եմ՝ նպատակը պետք է լինի փողոցի միջոցով իշխանափոխությունը, ոչ թե մանդատներ ստանալը: Կամ էլ՝ ԱԺ-ում մեծամասնություն ունենալը, որն ինքնըստինքյան իրավիճակ է փոխում: Այս ընտրությունները պետք է լինեն գործիք:

- Այն, ինչ այս քառօրյայում կատարվեց խորհրդարանում՝ ԲՀԿ-ի ընդդիմադիր կեցվածքը նկատի ունեմ, խորհրդարանից դուրս գտնվող ընդդիմադիր ուժերին ոգեւորո՞ւմ է:

- Ոգեւորվելու որեւէ խնդիր չունենք: ԲՀԿ-ն պետք է ինքը կարողանա իր ճիշտ տեղը գտնել պատմական ժամանակահատվածում, կայացնի ճիշտ որոշում: Կորոշի՝ մենք կողջունենք, չի որոշի՝ իր խնդիրն է: Ես կարծում եմ՝ ճիշտ կլինի կանգնել ժողովրդի կողքին:

- Ակնհայտ շինծու մեղադրանքներով կալանավորելով «Հայկական ժամանակ» թերթի լրագրողին՝ ո՞ւմ եւ ի՞նչ էր ուզում ասել ոստիկանապետը:

- Ոստիկանության համար արդեն ձեռագիր է դարձել՝ նախ թմրանյութերի միջոցով ինչ-որ մարդկանց ազատությունից զրկելը, այնուհետեւ գայի տեսուչների միջոցով ավտովթարներ, վրաերթեր սարքելը: Ինքս չեմ ճանաչում այդ երիտասարդին՝ Համիկ անունով, Հարավ-արեւմտյան թաղամասից. Հայկի դեպքը, ով բոլորի կողմից սիրված-հարգված անձնավորություն է, ակնհայտ շինծու էր: Դրանք շատ բաների մասին են խոսում: Ես չեմ կարծում, որ ոստիկանապետն առանց Սերժ Սարգսյանի հետ համաձայնեցնելու այդպիսի քաղաքական ակցիաներ կատարեր: Եվ Համիկի, եւ Հայկի հետ կապված դեպքերը ակնհայտ է, որ սարքված են: Եթե անգամ իրականում նման բաներ եղել են, ապա այդ դեպքերում մարդուն այլ կարգի պատասխանատվության են ենթարկում եւ ոչ թե ազատազրկում են:

- Հայտնի «հեղինակություն» «Բանգլադեշի Համիկը», ում մասին խոսում եք եւ պաշտպանում, բազմաթիվ «գլուխգործոցների» հեղինակ է:

- Ես նրան չեմ էլ ճանաչում: Մանուկից եմ տեղյակ, հետեւել եմ նաեւ քաղաքում տեղի ունեցող խուսակցություններին եւ դրանց արդյունքում եմ կարծիք հայտնում: Ոչ էլ պաշտպանելու խնդիր ունեմ եւ ոչ էլ կարծում եմ, որ նա իմ պաշտպանության կարիքն ունի: Այ, երբ «գլուխգործոցներ» էր անում, թող այդ ժամանակ տանեին եւ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկեին, ոչ թե տարիներ անցնեն, իրենց այդ երիտասարդի գոյությունը քաղաքական իմաստով ձեռք չտա՝ ազատությունից զրկեն:

Զրույցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

# Այդ փոփոխամիտ պատգամավորները

«Օրինաց երկիր» կուսակցությո՞ւնն է հանել պատգամավոր Գագիկ Բաղդասարյանին իր շարքերից, թե՞ պատգամավորն է իր կամքով դուրս եկել այդ կուսակցությունից, դա, ի վերջո, այդ գործչի եւ այդ կուսակցության գործն է: Պարզապես այս փոքրիկ եւ գուցե ոչ այնքան կարեւոր օրինակով հետաքրքիր է հետեւել քաղաքական գործիչներին, ասենք՝ երկու տարի առաջ եւ այսօր:

Կուսակցությունից հեռացվելուց (ինչպես ինքն է պնդում՝ հեռանալուց) անմիջապես հետո Գ. Բաղդասարյանը մի շարք հարցազրույցներում հայտարարեց, որ ինքը ՕԵԿ շարքերում չի արդեն Երեւանի ավագանու ընտրություններից 15 օր առաջ: Հիշեցնենք, որ այդ ընտրությունները տեղի են ունեցել 2009 թվականի մայիսին: Սակայն 2010 թվականի նոյեմբերի 20-ին «Հրապարակ» օրաթերթում Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Բաղդասարյանը լրագրողի հարցին՝ ինչո՞ւ որոշեց ադամանդներով զարդարել ՕԵԿ-ի նշանը, որպեսզի այն ավելի՞ շատ հաջողություն ու փառք բերի, Գագիկ Բաղդասարյանը պատասխանել է. «Առաջինը, որ դա ոչ միայն ՕԵԿ-ի նշանն է, այլեւ մեր հանրապետության դրոշն է դրա վրա, իսկ ՕԵԿ-ը ոսկեզօծեցի, որովհետեւ ուզում եմ, որ այդպիսին լինի ՕԵԿ-ը»: Ստացվում է, որ պարոն Բաղդասարյանը ոչ միայն «Օրինաց երկիր» կուսակցության անդամ է եղել վերոհիշյալ ընտրություններից հետո, այլեւ յուրահատուկ վերաբերմունք է ունեցել կուսակցական խորհրդանիշների նկատմամբ:

Գնահատելով ՕԵԿ վերջին ժամանակահատվածի գործունեությունը՝ Գագիկ Բաղդասարյանը այն անվանել էր իր սկզբնական բուն նպատակից շեղված՝ դատապարտելով կուսակցությանը ոչ սկզբունքային դիրքորոշման համար: Սակայն կարդանք «Առավոտ» օրաթերթի համարը (17.06.2010), որտեղ Գագիկ Բաղդասարյանը լրագրողի այն հարցին, թե ՕԵԿ-ը ընտրություններին մասնակցեց որպես ընդդիմություն, այսօր իշխանական կոալիցիայի մաս է կազմում, եւ որպես ՕԵԿ-ական՝ ինչպե՞ս եք գնահատում կուսակցության կոալիցիոն գործունեությունը, Գագիկ Բաղդասարյանը պատասխանել է. «Օրինաց երկիրը», որոշելով մաս կազմել կոալիցիային, առաջին հերթին իր առջեւ նպատակ է դրել կյանքի կոչել կուսակցության նախընտրական ծրագրերը՝ համարելով, որ իշխանությունը պատասխանատվություն եւ միջոց է դրանք իրականացնելու համար: Կարծում եմ՝ ՕԵԿ-ը հենց այդպես էլ իրականացնում է իր կոալիցիոն գործունեությունը»: Այսինքն՝ այդ պահին տվյալ գործիչը ՕԵԿ-ի անսկզբունքայնությունից բողոքներ, կարծես թե, չուներ:

Այս օրերին Գ. Բաղդասարյանը հայտարարում է, որ նախագահական ընտրություններից հետո, երբ ՕԵԿ-ը կոալիցիոն հուշագիր ստորագրեց, ինքը դեմ է եղել կոալիցիա կազմելուն եւ, հետեւաբար, իրեն այնքան էլ լավ չի զգացել որպես արդեն իշխանության մաս կազմող ՕԵԿ-ի անդամ-պատգամավոր: Սակայն նույն «Առավոտ» օրաթերթի 31.05.2011-ի համարում լրագրողի այն հարցին, թե «Օրինաց երկիրը» խորհրդարանում ինչպիսի ներկայացվածություն կունենա, անցած-դարձածից (այսինքն՝ նախագահական կեղծված ընտրություններից եւ ՕԵԿ-ի՝ կոալիցիայի մաս կազմելուց) հետո, Գագիկ Բաղդասարյանը պատասխանել է. «Ես որպես ՕԵԿ անդամ՝ կփորձեմ ամեն ինչ անել, որպեսզի իմ կուսակցությունն իր արժանապատիվ տեղն ու դերը ունենա նորընտիր խորհրդարանում: ՕԵԿ-ը նախորդ ընտրություններից հետո ընտրազանգվածի որոշակի կորուստ ունեցավ, բայց ինչո՞ւ եւ ինչի՞ դիմաց մենք այդ կորուստն ունեցանք. ունեցանք երկրում կայունությունն ու անվտանգությունը ապահովելու գնով եւ ակնկալիքով: Մենք թույլ չտվեցինք, որ Հայաստանում շատ արյուն հոսի, մենք թույլ չտվեցինք, որ մեր արտաքին թշնամին, ում համար ռազմական հոխորտանքները շարունակական բնույթ են կրում, օգտվելով երկրում առկա անկայուն իրավիճակից, դիմի ագրեսիայի: Մենք գնացինք այդ քայլին՝ համոզված, որ այդ պահին միակ ճիշտ ուղին դա էր: Եվ այսօր էլ լծված ենք մեր երկրում դրական բարեփոխումներ իրականացնելու պարկեշտ առաքելությանը»:

Թերեւս Գագիկ Բաղդասարյանի՝ կուսակցությունից հեռացվելուց հետո ամենաուշագրավ հայտարարությունն այն է, թե՝ «ինչ էին ուզում ինձանից, անցած ընտրությունների նման երեխուս բերանից կտրեմ-բերեմ, որ ՕԵԿ-ը հասնի իշխանության ու ինձ թալանի՞...»: «Հրապարակ» օրաթերթի 20.11.2010-ի համարում արդեն ՕԵԿ անդամ-պատգամավոր Գագիկ Բաղդասարյանը լրագրողի այն հարցին, թե՝ «լուրջ ներդրումներ պետք է արվեն, որպեսզի դառնաս պատգամավոր կամ ընտրացուցակում առաջնային տեղ զբաղեցնես: Դուք օրինակ՝ ՕԵԿ-ում որքա՞ն ներդրում եք արել, որ դառնաք պատգամավոր», Գագիկ Բաղդասարյանը պատասխանել է. «Ես իմ կուսակցական աշխատանքով եւ իմ հեղինակությամբ եմ վաստակել դա, էդ վստահությունը: Թե մնացած տեղերում ինչ են ասում, էդ հարցերն իրանց ուղղեք: Ես կոնկրետ ներդրում չեմ արել եւ չգիտեմ տենց բան»: Այսինքն՝ 1 տարի 2 ամիս առաջ պարոն Բաղդասարյանը չէր ընդունում, որ նա իր երեխայի բերանից ինչ-որ բան է կտրել՝ պատգամավոր դառնալու համար:

ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

## Եվրախորհրդարանի նախագահը Թուրքիային կոչ է անում ընդունել անցյալը



Եվրախորհրդարանի նորընտիր նախագահ, գերմանացի սոցիալ-դեմոկրատ Մարտին Շուլցը Թուրքիային կոչ է արել 1915 թվականի Հայոց ցեղասպանության հարցում հետեւել Գերմանիայի օրինակին եւ ընդունել սեփական անցյալը:

«Դուք պետք է դեմ-հանդիման կանգնեք ձեր պատմությանը եւ թույլ տաք անկախ ուսումնասիրություններ, եւ եթե այդ անկախ հետազոտությունների եզրակացությունը լինի այն, որ խոսքը ցեղասպանության մասին է, դուք պետք է այն ճանաչեք»,- ըստ «Ազատություն» ռ/կ ի՝ հայտարարել է Եվրախորհրդարանի նախագահը:

Ընդգծելով, որ իր երկրի անցյալը եւս «դյուրին անցյալ չէ, շատ դժվարին անցյալ է», գերմանացի խորհրդարանականը ասել է, որ նոր սերունդները, նույնիսկ եթե մեղավոր չեն, պետք է այնպես անեն, որպեսզի անցյալի սարսափները չկրկնվեն:

Եվրախորհրդարանի նախագահը կոչ է արել հարգել Ֆրանսիայի խորհրդարանի կողմից վերջերս ընդունված՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը: «Ես գիտեմ, որ Եվրամիությունում շատերը կան, ովքեր Ֆրանսիացի խորհրդարանականների կարծիքին են»,- հայտարարել է Շուլցը՝ հավելելով, թե Թուրքիայից ակնկալում է «խնդրի կարգավորում»:

Ա aravotdaily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 09.02.2012



# Orange-ն ապահովում է իր բաժանորդների անվտանգությունը համացանցում

Կրելով կորպորատիվ պատասխանատվություն՝ ընկերությունը մեր երեխաներին պատրաստ է պաշտպանել վիրտուալ միջավայրի վտանգներից:

Ավելի քան 70 երկրներում փետրվարի 7-ը նշվում է Ապահով ինտերնետի օր: Այս տարի ապահով համացանցի օրվա առթիվ «Orange Արմենիա» ընկերությունը «Մեդիակրթության կենտրոնի» հետ համատեղ նախաձեռնել է «Ապահով համացանց Հայաստան 2012» լայնածավալ ծրագիրը: Միամյա ծրագրի շրջանակներում կվերապատրաստվեն ավագ դպրոցի մոտ 300 դասավանդողներ, իսկ բաց դասին կմասնակցեն ավելի քան 5000 աշակերտներ եւ մանկավարժական կրթություն ստացող ուսանողներ:

Արդեն Orange-ի խանութներում կարելի է ձեռք բերել ոչ միայն «Kaspersky» լավագույն հակավիրուսային ծրագրերը, այլ նաեւ անվտանգ ինտերնետի համաշխարհային առաջատարի՝ «Kaspersky Internet Security» ծրագիրը, որը թույլ կտա ծնողներին առավելագույնս պաշտպանել իրենց երեխաներին ոչ պատշաճ բովանդակությամբ կայքէջերից: «Kaspersky» լաբորատորիայի հետ համագործակցությանը Orange-ը մեկնարկել էր դեռ սեպտեմբեր ամսին, երբ բոլոր բաժանորդներին հնարավորություն տրվեց անվճար փորձել «Kaspersky» հակավիրուսային ծրագրի արդյունավետությունը, իսկ այժմ ընկերությունն անում է եւս մեկ քայլ՝ դեպի անվտանգ ինտերնետ:

Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուայի դիտարկմամբ՝ «Անվտանգ ինտերնետի համաշխարհային առաջատարի՝ «Kaspersky» ընկերության հետ համագործակցության շրջանակներում, այսուհետեւ մեր ինտերնետի 70,000 բաժանորդները կարող են վերահսկել իրենց երեխաների մուտքն ինտերնետ: Սակայն միայն ծրագրային ապահովումներ առաջարկելը բավարար չէ, որպեսզի մեր բաժանորդները գտնվեն լիարժեք անվտանգության մեջ: Մենք Հայաստանում մատուցում ենք ինտերնետի ծառայություններ, եւ շարժական ինտերնետի առաջատարի մեր դիրքը որոշակի պատասխանատվություն է հուշում՝ ինտերնետի անվտանգ օգտագործման առումով սպառողներին աջակցելու, կրթելու եւ ուղղորդելու համար: Կորպորատիվ պատասխանատվության մեր պարտականությունների շրջանակներում էլ ուրախությամբ միացել ենք այս լայնամասշտաբ ծրագրին, որի նպատակն է օգտագործողներին տալ ինտերնետի անվտանգ օգտագործման բանալիները»:




Նշենք, որ այս տարվա հունվարի 19-ին, Բրյուսելում՝ Եվրամիության նախաձեռնությամբ, տեղեկատվական եւ հեռահաղորդակցության 25 ընկերությունների կողմից ստորագրվել է «Անվտանգ ինտերնետ երեխաների համար» հուշագիր, որով ընկերություններն արտահայտում են իրենց պատրաստակամությունը՝ ապահովել անվտանգ ինտերնետ միջավայր, հատկապես երեխաների համար: Հուշագիրը «Ֆրանս Տելեկոմ Orange-ի» հետ միասին ստորագրել են այնպիսի ընկերություններ, ինչպես Google, Facebook, Deutsche Telekom, RIM, Nokia, Telecom Italia, Vodafone եւ այլն:

Ըստ «Մեդիակրթության կենտրոնի» փոխտնօրեն Նարինե Խաչատրյանի՝ «Վիրտուալ ցանցի եւ իրական կյանքի կանոնները շատ նման են եւ դրանց հետեւելն ավելի արդյունավետ կդարձնի համացանցի օգտագործումը: Տրամադրելով անսահման եւ աննախադեպ հնարավորություններ՝ համացանցը պարունակում է նաեւ բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար:

Ավելին, երեխաներն ու պատանիներն իրենց ժամանակի մի զգալի մասը անցկացնում են այն վիրտուալ միջավայրում, որտեղ օգտակար բովանդակության հետ միասին կա նաեւ վտանգավոր բովանդակություն»:

Այնպես որ, բոլոր նրանք, ովքեր անհանգստանում են իրենց երեխաների կողմից սպառված ինտերնետային բովանդակության բնույթով եւ անվտանգությամբ, կարող են այցելել www.safe.am կայքը, որտեղ տեղադրված են անհրաժեշտ տեղեկություններ եւ խորհուրդներ հայերեն լեզվով՝ ցանցից ապահով օգտվելու համար:

Մշակվել է ավելի քան 10 000 ուսումնական կայք եւ ստեղծվել 3000 ապահով ուսումնական կայքերի հղում պարունակող շտեմարան:

«Ապահով ինտերնետ» ծրագիրը նվիրված է Ապահով ինտերնետի միջազգային օրվան, որը, սկսած 2004-ից, նշվում է յուրաքանչյուր տարվա երկրորդ ամսվա երկրորդ շաբաթվա երկրորդ օրը: Համաեվրոպական INSAFE նախաձեռնությունը, տարեցտարի ընդլայնվելով, մարդկանց համախմբում է՝ պայքարելու ապօրինի, վնասակար եւ ոչ պատշաճ բովանդակության դեմ:

R

## Բիզնեսը բարեգործություն չի անում

Տավուշի մարզում ընդերքի պաշարներով բիզնես ծավալած խոշոր ձեռնարկությունները՝ բնական քարի արդյունահանմամբ եւ վերամշակմամբ զբաղվող Իջեւանի «Քարարտ» ընկերությունը, Դիլիջանում հանքային ջրերի արտադրությամբ զբաղվող 2 ընկերությունները՝ «Դիլիջանը» եւ «Ֆրոլովա բալկան», Տավուշի մարզում բարեգործությամբ կամ չեն զբաղվում, կամ շատ քիչ ծավալով են բարեգործություն անում: Այդ ընկերությունների տերերը պետության եւ հասարակության հանդեպ իրենց պարտավորությունը կատարված են համարում՝ հարկեր մուծելով: Մինչդեռ բիզնեսը պետք է սոցիալական պատասխանատվություն ունենա: Փաստորեն՝ երկրի ընդերքը ծառայում է սահմանափակ թվով անձանց հարստանալուն: Հատկապես հաշվի առնելով, որ մեր երկրում ընդերքը շահագործելու համար վճարվող հարկ ու տուրքերը բավականին ցածր են:

Իրանում արդյունահանված նավթի հասույթից երկրի բնակիչներին մասհանումներ են արվում: Հարեւան երկրում էլ Ադրբեջանի պետական նավթային ընկերության շահույթները մտնում են պետական բյուջե, ուղղվում տարբեր ծրագրերի իրականացմանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Միավորված հայերը» քաղաքական դիվիդենդնե՞ր են հավաքում

Երեկ «Առավոտին» են դիմել Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով եւ Սայաթ-Նովայի պողոտայով պարփակված տարածքի մի խումբ բնակիչներ, որոնք կոչ են անում ՀՀ վարչապետին եւ Երեւանի քաղաքապետին իրենց հասցեում մասամբ սկսած քաղաքաշինական ծրագիրն ավարտին հասցնել: Իսկ «Միավորված հայեր» կուսակցությանը, որն, ըստ բնակիչների, փորձում է այս օրերին իրենց այս հարցը շահարկելով քաղաքական դիվիդենդներ հավաքել՝ խորհուրդ են տալիս հարցին ավելի լուրջ մոտենալ, քանի որ ներկայումս մի խումբ մարդիկ անտուն են եւ սպասում են այդ շենքի կառուցմանը:



«ՀՀ կառավարության 09.09.2010թ. թիվ 1258-Ն որոշմամբ՝ Երեւան քաղաքի Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով եւ Սայաթ-Նովայի պողոտայով պարփակված տարածքի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: Նույն որոշմամբ տարածքի ձեռքբերող է ճանաչվել «Ավագ Շին» ՍՊԸ-ն: Վերոհիշյալ տարածքի բնակիչներս մեր մտահոգությունն ենք հայտնում հարակից շենքերի բնակիչների բողոքների առիթով՝ տարածքում քաղաքաշինական ծրագրի իրականացման վերաբերյալ: Ցանկանում ենք նշել, որ բողոք ներկայացրած քաղաքացիների մի մասն արդեն ստացել են փոխհատուցում իրենց ավտոտնակների համար, որից հետո միայն միացել են բողոքի մասնակիցներին: Արդարացի հարց է առաջանում, թե ինչո՞ւ նախկին ավտոտնակների տերերը չէին բողոքում մինչեւ փոխհատուցում ստանալը: Եվ ինչու ներկայիս բողոքավորները չէին անհանգստանում, երբ ամբողջ բակը խաղահրապարակի եւ ազատ գոտու հաշվին կառուցապատված էր ավտոտնակներով: Բողոքող մի քանի բնակիչներ հավաքել էին ստորագրություններ եւ դիմել դատարան, սակայն դատարանը դիմումը մերժել էր: Ի դեպ, նկատենք, որ նշյալ տարածքում կառուցվող շենքի հարկայնությունն իջեցնելուց հետո մնացել է հարակից շենքերի ընդամենը 5-6 բողոքող բնակիչ, որոնք հետապնդում են շահադիտական նպատակներ եւ օգտվելով իրավիճակից՝ փորձում են օգուտներ քաղել: Իրականում նրանց՝ քաղաքապետին ուղղված դիմումում ոչ թե նոր ստորագրություններ են, այլ հին՝ դատարանին ուղղված դիմումից վերցված ստորագրություններ: Ձեզ դիմող բնակիչներս արդեն կնքել ենք բնակարանային փոխհատուցման պայմանագրեր՝ տեղում կառուցվող շենքից բնակարաններ ստանալու պայմանով: Նշված բնակիչների բնակարաններն արդեն քանդված են, եւ նրանք բնակվում են «Ավագ Շին» ընկերության կողմից վարձակալած բնակարաններում: Իսկ բնակիչների մյուս մասն արդեն կնքել են նախնական պայմանագրեր՝ տեղում կառուցվող շենքից բնակարաններ ստանալու պայմանով: Քաղաքապետին դժգոհություն ներկայացրած բնակիչներն ապրում են հարակից շենքերի լուսավոր ու արեւոտ բնակարաններում, սանիտարահիգիենիկ, նորմալ պայմաններում: Իսկ մենք ապրում ենք այդ նույն բակում՝ զրկված լինելով այդ բոլոր հարմարություններից:

Ուստի խնդրում ենք չոտնահարել մեր իրավունքները եւ հաշվի չառնել հարակից շենքերի մի քանի բնակչի անհիմն բողոքները, ու կառուցապատող ընկերությանը պարտադրել սկսել եւ շուտ ավարտել շենքի շինարարությունը, որպեսզի մենք էլ տեղափոխվենք եւ վերջապես ապրենք մարդավայել ու բարեկեցիկ պայմաններում: Ի դեպ, նախկինում մեր բակում ոչ մի կանաչ տարածք չկար, սակայն նոր նախագծով տնկվելու է 60-70 ծառ եւ կլինի 4500 քմ կանաչ տարածք: Մեր այս մտահոգությունները կիսում է նաեւ «Ժառանգություն» կուսակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը, որը, օրերս հանդիպելով Երեւանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանին, նույնպես հորդորել է չմոռանալ նաեւ խարխուլ տներում բնակվողների մասին եւ չանտեսել նրանց շահերը»,- գրում են բնակիչները:

Դիմումի տակ ստորագրել է
տարածքում բնակվող 36 բնակիչ

# Թբիլիսիի բանտում Մասումյանին ԱԱԾ հայ քննիչը սպառնացել է

ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարանը, Հենրիկ Տեր-Ադամյանի նախագահությամբ, նախորդ օրը շարունակեց Գագիկ Մաթեւոսյանի («Մուսկուլ Գագո») եւ նրա խմբի անդամների՝ Արտակ Ղուկասյանի, Արայիկ Ոսկանյանի, Վազգեն Կարապետյանի, Գրիգոր Գրիգորյանի վերաքննիչ բողոքները: Հիշեցնենք, որ անցյալ տարվա հոկտեմբերի 14-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը ապացուցված համարեց ազատամարտիկներից կազմված խմբի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետեկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի (2009թ. մայիսի 23-ի) եւ մի քանի անձանց նկատմամբ մահափորձեր իրականացնելու մեղադրանքը: Ըստ գործի նյութերի, խմբի անդամները պայթուցիկ նյութ են տեղադրել Խաչատրյանի տան դիմացի կիսակառույցի հենասյանը, որը պահակ Ալեքսան Ղազարյանի կողմից հայտնաբերվել է՝ նա ստացել է միջին ծանրության վնասվածք: Խմբի անդամներից էր Ռաֆայել Մասումյանը, որը ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվել էր ազատազրկման ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-305 հոդվածով՝ 11 տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 329 հոդվածի 1-ին մասով՝ 3 տարի ժամկետով: 2011թ. մայիսի 26-ի համաներման ակտի կիրառմամբ՝ Ռ. Մասումյանը ՀՀ քրեական օրենսգրքի 329 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը իբր կատարելու համար պատժից ազատվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-305 հոդվածով նախատեսված արարքը իբր կատարելու համար պատժի ժամկետը կրճատվել է 1/4-ով: Ըստ գործի նյութերի, Մասումյանը տեղեկացել է, որ «այլ անձը» ցանկանում է 150 000 ԱՄՆ դոլար վարձատրության դիմաց պատվիրել «պետական գործչի»՝ Գագիկ Խաչատրյանի սպանությունը, համաձայնության է եկել, որպես միջնորդավճար պահանջել է 10 000 դոլար, իսկ Խաչատրյանի, նրա ընտանիքի անդամների կողմից շահագործվող մեքենաների տվյալները Մասումյանը նշել է նոթատետրում, այն փոխանցել Գագիկ Մաթեւոսյանին: Նրա պաշտպանը՝ հայտնի փաստաբան Տիգրան Աթանեսյանը դատարանին ներկայացրեց իր բերած վերաքննիչ բողոքը, որից հետո Մասումյանը, որը նկատելիորեն կաղում էր եւ բռնել էր մեջքը, նախագահողից խնդրեց, որպեսզի հաջորդ դատական նիստերին չմասնակցի: Դատարանը հարգեց դատապարտյալի խնդրանքը:

## ԱԱԾ աշխատակիցները՝ վկա՞

Պաշտպանը գտնում էր, որ դատավճիռը անօրինական է, անհիմն եւ չպատճառաբանված, Ռ. Մասումյանի մեղքը ապացուցված չէ, հետեւաբար նա պետք է արդարացվի: Ըստ պաշտպանի, Մասումյանի մեղադրանքի հիմքում դրվել են օրենքով չնախատեսված, արգելված կամ օրենքի պահանջների կոպտագույն խախտումներով ձեռքբերված ապացույցներ: Ապացույցների մեջ նշվեցին վկաներ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետ, քրեական գործով քննչական խմբի ղեկավար Մնացական Մարուքյանի եւ ազգային անվտանգության ծառայության աշխատակից Կարեն Հակոբյանի, նաեւ ընթերականեր Լորիկ Վարոսյանի եւ Արմեն Մաթեւոսյանի ցուցմունքները: Կա մի ցնցող ապացույց էլ՝ Գագիկ Մաթեւոսյանի ավտոմեքենան «բերման ենթարկելու», որից գտնվել էր Մասումյանի նոթագրությունը: Հիշեցնենք, որ Մասումյանը ձախողումից հետո Վրաստանի սահմանն էր հատել, ապա կրկին վերադարձել Հայաստան, ստացել Հունաստանի դեսպանատնից վիզա, նորից անցել Վրաստան: Այնտեղ էլ հայտնաբերվել էր եւ տեղափոխվել է Թբիլիսիի թիվ 8 բանտը: Մասումյանին քրեական գործով հարցաքննում է քննչական խմբի ղեկավար, գնդապետ Մ. Մարուքյանը, այցելում է ԱԱԾ աշխատակից Կարեն Հակոբյանը: Տիգրան Աթանեսյանի տեղեկացմամբ, նաեւ տեսաձայնագրում է, ինչի իրավունքը չունեին մեր ԱԱԾ-ականները: «Հայաստանի քննչական մարմիններն իրավունք չունեն կատարելու քննչական գործողություններ Վրաստանի Հանրապետության սուվերեն տարածքում: Հայաստանի եւ Վրաստանի միջեւ 01.06.1996թ. կնքվել է քրեական գործերով իրավական օգնության մասին պայմանագիր, որն ուժի մեջ է մտել 04.03.1997թ.: Համաձայն նշված պայմանագրի՝ կողմերը քրեական գործերով իրավասու են միմյանց տալու իրավական օգնության մասին հանձնարարություններ: Հանձնարարությունները կատարվում են դրանք իրականացնող կողմի, տվյալ դեպքում՝ Վրաստանի օրենսդրությանը համապատասխան: Սույն քրեական գործով նախաքննության մարմինը Վրաստանի պատկան մարմիններին ներկայացրել է իրավական օգնության մասին հանձնարարություն՝ խնդրելով հարցաքննել իմ պաշտպանյալին մի շարք հարցերի շուրջ: Համաձայն պայմանագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի՝ հայկական կողմը ներկայացնող քննիչը կարող էր ներկա գտնվել հարցաքննությանը կամ



նպաստել հարցաքննության կատարմանը: Սրանից հետեւում է, որ ամեն դեպքում հայաստանցյան քննիչը չէր կարող ինքնուրույն հարցաքննել իմ պաշտպանյալին: Այդ իրավասությունը պատկանում էր վրացի համապատասխան պաշտոնատար անձին»,- ասաց Տիգրան Աթանեսյանը: Նա հավելեց, որ մեղադրող կողմը Կենտրոնի դատարանում ներկայացրել է Ռ. Մասումյանին վրացի քննիչի կողմից հարցաքննելու արձանագրությունը, որի բովանդակությունը, սակայն, որեւէ առնչություն չունի տեսաձայնագրության բովանդակության հետ: Մասումյանը չի ընդունել իր մեղքը եւ հրաժարվել է ցուցմունք տալ: «Դատավճռում անընդհատ նշվում է, թե Ռ. Մասումյանը Վրաստանի բանտում ոչ թե ցուցմունք է տվել, այլ «հայտնել է»: Այսինքն, Ռ. Մասումյանի խոսակցությունը, ըստ դատարանի, հայտնություն է: Սակայն հայտնությունը, որպես ապացույց, Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ»,- ասում էր պաշտպանը: Ըստ վերաքննիչ բողոքի, Մ. Մարուքյանը ակնհայտորեն ծաղրել եւ սպառնացել է Ռ. Մասումյանին, ինքն իրեն անվանել է «աստված», նշել է, որ Ռ. Մասումյանին կարող են սպանել Թբիլիսիի բանտում, խոսակցությունը վարել է ԱԱԾ-ն ներկայացնող ստային ոչ վայել փողոցային ժարգոնով եւ այլն: Տիգրան Աթանեսյանը ուշադրություն հրավիրեց նաեւ այն հանգամանքի վրա, որ ապացույց ճանաչված տեսաձայնագրությունը կատարվել է Ռ. Մասումյանի պաշտպանի ներկայությամբ: «Նման պնդումն առնվազն զարմանալի է, քանի որ Ռ. Մասումյանի եւ Մ. Մարուքյանի խոսակցությունն ընթանում է հայերեն լեզվով, իսկ պաշտպանը վրացի է: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, որ պաշտպանը ներկա է հարցաքննության սենյակում՝ նրա մասնակցությունը բացառվում է՝ լեզվի չիմացության պատճառով»,- ասում է նա:

## Գագիկ Խաչատրյանը պետական գործիչ չէ

Փաստաբանն ուշադրություն հրավիրեց ՀՀ ԿԱՊԵԿ նախագահի, գործով տուժող ճանաչված Գ. Խաչատրյանին «պետական գործիչ» համարելու վրա, որը «եկել է» նրանից, որ Գ. Խաչատրյանը զբաղեցնում է բարձր պետական պաշտոն: «Այսինքն՝ դատարանն ամբողջությամբ անտեսել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածով որեւէ արարք որակելու համար, նախ պետք է հստակ պարզել եւ հիմնավորել, որ տուժողը հանդիսանում է տվյալ դեպքում պետական գործիչ, եւ որ հանցավոր ոտնձգությունը, եթե այդպիսին առհասարակ տեղի է ունեցել, պայմանավորված է այդ պետական գործչի պետական գործունեությունը դադարեցնելու շարժառիթով: Դատարանը որեւէ նման ապացույց չի ունեցել, իսկ մեղադրող կողմը որպես Գ. Խաչատրյանի նկատմամբ մահափորձ կատարելու շարժառիթ փաստացի դիտել է անձնական վրեժխնդրությունը»,- ասաց Տ. Աթանեսյանը: Ի դեպ, «պետական գործիչը» այդպես էլ հարկ չի համարել մինչ օրս գալ դատարան, որպեսզի պատասխաներ, թե հանդիսանո՞ւմ է պետական գործիչ, թե՝ ոչ, հիմնավորելով պատասխանը համապատասխան իրավական ակտերով: Պաշտպանական կողմին նաեւ հետաքրքրում է, թե ինչպիսի պետական գործունեություն է Գ. Խաչատրյանը իրականացնում, եւ հատկապես ինչով է այն տարբերվում սովորական վարչարարությունից, եւ որ ինչի համար մահափորձ պիտի կազմակերպվեր:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հ. Գ. Պաշտպանի կարծիքով, մենք գործ ունենք անձնական վրեժխնդրության շարժառիթի հետ, քանի որ Ռաֆայել Մասումյանի որդին՝ Սուրեն Մասումյանը մինչեւ 2009թ. հունիսը աշխատել է ՊԵԿ-ի օպերատիվ-հետախուզական վարչությունում: Ռ. Մասումյանի կալանավորվելուց անմիջապես հետո Սուրեն Մասումյանը ազատվել է աշխատանքից:

# Գիզիրյանը կպաշտոնազրկի «թայֆաբազությամբ» զբաղվող գյուղապետերին

Մի ամիս է՝ Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանը մարզպետարանի վարչության բոլոր պետերի հետ այցելում է գյուղեր, խորհրդակցություններ անցկացնում, լինում այս կամ այն կառույցում: Թե ձմռան սառնամանիքին, փակ ճանապարհների առկայության պայմաններում, ինչու է գյուղեր այցելում ու ինչ հարցեր է քննարկում՝ քաղաքակա՞ն, թե՞ գյուղափրկիչ, մարզպետը վստահեցնում է, որ քաղաքական թեմաները բացառվում են: Ըստ նրա՝ գնում է ստուգելու իր ձեռնարկած գործերի արդյունքները: Երեկ մարզպետը իր, այսպես ասած, խորհրդավոր այցերին մասնակից դարձրեց նաեւ լրագրողներին: Նա աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց Ախուրյանի տարածաշրջանի Ոսկեհասկ գյուղում: Առաջինը զեկուցելու իրավունքը ընձեռվեց մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին, որն էլ սկսեց մանրամասն ներկայացնել մարզի քաղաքաշինական ծրագրերը, այդ թվում՝ բնակարանաշինությունը: Պաշտոնյայի երկար ելույթը հունից հանեց Աշոտ Գիզիրյանին, որը նկատողություն արեց: «Հարյուր անգամ լսել ենք ձեր ասածը, վստահ եմ, որ բազմաթիվ անգամ դուք լրագրողներին տեղյակ եք պահել, անցեք Ոսկեհասկի խնդիրներին»,- ասաց մարզպետը: Քաղաքաշինության վարչության պետը դեռ բերանը չէր բացել, երբ դպրոցի ուսուցիչներից մեկը վրա տվեց, թե՝ ամենակարեւոր խնդրի մասին մտածեք, 2 կմ ճանապարհի եղածն ինչ է՝ ասֆալտապատեք, քանի որ վիրավորական է նման ճանապարհներով երթեւեկելը: Գյուղապետ Ջեյմս Մուրադյանն էլ իր հերթին ներկայացրեց, որ Ախուրյանն ու Ոսկեհասկը իրար կապող ճանապարհը այնպիսի վատ վիճակում է, որ վերջինիս ճանապարհ բառով կարելի է կոչել միայն ձմռանը, ձյունը ծածկում է, այն մի կերպ դառնում է անցանելի, բայց անձրեւների ու հեղեղների ժամանակ անցնել չի լինում: Գիզիրյանը հիշեցրեց, որ Ոսկեհասկից բացի՝ մարզն ունի խնդիրների մեջ թաղված 116 գյուղական համայնք, եւ եթե անգամ այդ ճանապարհը վերանորոգվի, այն չի ասֆալտապատվի, այլ կմնա գրունտային: Վարչության պետերը հերթով խոսեցին իրենց ոլորտներից, գյուղերում սպասվող ՏԻՄ ընտրություններից, ազոտային պարարտանյութից ու դրա գներից: Ամենացնցողը առողջապահության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանի ելույթն էր. նա գեղարվեստական բառապաշարով այնպիսի մի գովք սկսեց կառավարության կողմից քաղծառայողներին սոցիալական փաթեթ հատկացնելուն, որ անգամ մարզպետը հետաքրքրասիրությունից գամվեց տեղում: «Ես կխոսեմ մի թեմայից, որը կապույտ երկնքում կայծակի նման մի բան է»,- այսպիսի նախաբանով սկսեց իր խոսքը պարոն Հովհաննիսյանը, որին Աշոտ Գիզիրյանը արձագանքեց. «Հլը ասա, ասա, էդ ի՞նչ կայծակ է»: Հ. Հովհաննիսյանը ժողովին մասնակցող ուսուցիչներին ասաց՝ եթե նախկինում «սիրտ էին վերանորոգում» միայն հարուստները, ապա այսուհետ ուսուցիչներն էլ հանգիստ ու առանց վախենալու կարող են պտրել, քանի որ նրանք էլ ապահովված են պետության կողմից եւ կարող են իրենց սրտերը եւս վերանորոգել: Սոցիալական փաթեթը մանրամասն ներկայացնելով՝ մարզպետարանի պաշտոնյան ասաց, որ ինքը իրոք զարմացած է, հիացած պետության շռայլությունից: Նա տարբեր բառերով այնքան կրկնեց նույն միտքը, որ Գիզիրյանը նախազգուշացրեց՝ նայի, աչքով չտաս: «Աչքս փորձված է, պարոն Գիզիրյան»,- հակադարձեց վարչության պետը:

Խորհրդակցությունից հետո Շիրակի մարզպետը պատասխանեց մեր օրաթերթի հարցերին: Մենք նրանից հետաքրքրվեցինք, թե 70 գյուղ այցելած մարզպետի աչքերով ո՞րն է ամենաողորմելի վիճակում գտնվողը: Ըստ Գիզիրյանի՝ հատկապես վատ պայմաններում են փոքր գյուղերը՝ Ջաջուռավանն ու Կարմրաքարը: Իսկ ովքե՞ր են մեղավոր՝ գյուղապետե՞րը, մեր այս հարցին պարոն Գիզիրյանն այսպես պատասխանեց. «Ոչ, գյուղապետերը չեն, գյուղերը փոքր են, համայնքները սեփական եկամուտներ չունեն, ճանապարհներն են վատ, այդտեղ մենք պետք է կարողանանք պետական ծրագրերով գյուղերին օգնել»: Իսկ կա՞ն գյուղապետեր, որոնք կարժանանան Տուֆաշենի գյուղապետի բախտին, այսինքն՝ պաշտոնանկ կլինեն: «Եկեք այսօր միանշանակ չասենք, բայց չի բացառվում, որ կլինեն նմանատիպ գյուղեր: Բայց ասեմ, որ ես եղել եմ 70 գյուղերում, ու ընդամենը 3-4 գյուղապետերից եմ դժգոհություն հայտնել, բայց չեմ ասի, թե որ գյուղապետերից: Ժողովուրդը, որ դժգոհություն է բարձրացնում, ոչ Գիզիրյանի հետ է կապված, ոչ երկրի նախագահի, ոչ էլ կառավարության, պարզ երեւում է, որ գյուղապետերի հետ է կապված՝ թայֆաբազության, քաղաքական տարբեր խաղերի մեջ են մտնում, այդ պահերը կան»,- ասաց մարզպետը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# «Պատմության հաշվին կոմերցիա անելը դավաճանություն է»

## Ճանաչված նկարիչ Վահրամ Հարությունյանը մտահոգված է



Այս օրերին մեծ էկրանին ցուցադրվում է երիտասարդ ռեժիսոր Նատալյա Բելյաուսկենեի «Եթե բոլորը…» ֆիլմը, որի մտահղացման, սցենարի հեղինակն ու գլխավոր դերակատարը Միքայել Պողոսյանն է: Ճանաչված նկարիչ Վահրամ Հարությունյանին (Կուկ) զայրացրել է, իր խոսքով՝ ֆիլմի սուտ պատմությունը: Նրա համոզմամբ, ազգային արժանապատվության ու պատմության հաշվին կոմերցիա անելը ամենաքիչը դավաճանություն է: Հիշեցնենք, որ ֆիլմի հերոսուհին՝ Սաշան, որ Արցախի համար կռված ռուս զինվորի զավակ է, ցանկանում է կեչի տնկել հոր գերեզմանին: Շիրիմը, սակայն, ադրբեջանական վերահսկողության ներքո գտնվող տարածքներում է: Միքայել Պողոսյանի մարմնավորած հրամանատար Գուգոն սահմանը խախտելու գնով իրականացնում է Սաշայի երազանքը: Նրանց նկատում է ադրբեջանցին, բայց չի սպանում՝ իր 10-ամյա որդու գերեզմանն էլ հայկական հողում է մնացել: Գուգոն խոստանում է նրա տղայի շիրմին էլ ծառ տնկել ու դա անում է դարձյալ ազգությամբ ռուս Սաշայի ձեռքով:

«Առավոտի» հարցին (25.01.2002 «Միքայել Պողոսյանը անկեղծ է սատարում նախագահին»)՝ ծառ տնկելու խաղաղասիրական ակցիաները ազգությամբ ռուսի ձեռքով կյանքի կոչելու տակ ինչ-որ ենթատեքստ կա՞, Միքայել Պողոսյանը պատասխանել էր, թե հատուկ իմաստ չեն դրել, բայց ցանկացողը կարող է տեսնել:

Վահրամ Հարությունյանն ասում է. «Եթե մեր երիտասարդությանը դաստիարակող մի 30 ֆիլմ նկարած լինեինք, կարելի էր մի հատ էլ սուտ ֆիլմ նկարել: Այստեղ կոնցեպտուալ բան կա թաքնված՝ նկարեք իրականությունը, ինչ որ եղել է, ի վերջո մենք ամբողջ աշխարհին համոզեցինք, որ տոկուն ենք, ուժեղ եւ հաղթել ենք Արցախյան պատերազմում, թե չէ էդ ամենը թողնել ու մի ռուս աղջկա մասին նկարել՝ լուրջ չէ: Վաղը էդ ֆիլմը կտանեն Ռուսաստանի հայկական համայնքներում ցույց կտան, հետո՞…Ի դեպ, հեռուստացույցով տեսա էդ աղջկան՝ եկել էր Հայաստան ու չգիտեր ինչի է եկել, ասաց, որ տեղյակ չէ հայերի պատմությունից, վերջում այնքան համոզեցին՝ ստիպված ասաց՝ սիրում եմ Հայաստանը: Ախր ինքը ինչո՞ւ պետք է տեղյակ լիներ մեր պատմության մասին, երբ ինքներս չենք գնահատում այն ու հետո բողոքում ենք, թե աշխարհը մեր մասին չգիտի»:

Նկարչի փաստմամբ, օրինակ՝ Երկրորդ համաշխարհայինի ժամանակ օդուժի հաղթանակներում հայերի դերը որոշիչ է եղել, տոկոսային հարաբերությամբ մենք ենք ամենաշատ հերոսներ տվել, բայց որեւէ հայի մասին ռուսները ֆիլմ չեն նկարել: «Նորմալ է, երբ մի արվեստագետ կոմերցիա է անում իր տանը, ռեստորանում, թատրոնում, բայց երբ քո պատմության վրա ես փող աշխատում, դա դավաճանություն է, սրիկայություն, փոքր մարդու քայլ: Ցավոք, ղարաբաղյան պատերազմի թեմայով ոչ մի ֆիլմ, մուլտ չունենք, թատրոն ու գիրք չունենք, որոնցով լուսաբանվում է մեր ազգի արյան մեջ մտնող այն սերմը, որը հետագայում տալիս է հերոս, քաղաքացի, հայ ազգի լավ ներկայացուցիչ: Ավելին, աջուձախ նախատում են, թե գլուխ գովելու բան չունենք, փորձում են նսեմացնել ազգային հպարտությունը: Մի տիպիկ օրինակ բերեմ՝ հին հռոմեական կայսրությունում ժամանակին արծաթե դրամ են հատել, որի հակառակ երեսին գրված է եղել՝ «Հայերը նվաճված են», 200 տարի էդ փողերը գործածել են, որ իրենց ժողովրդին «դուխ» տան, ասեն՝ հայերը նվաճված են, մի՛ վախեցեք նրանցից, իսկ ի՞նչ ենք անում մենք՝ մեր ունեցածը թողել ենք ու ուրիշներին ենք հերոսացնում: Կամ ինչո՞ւ է էդ ֆիլմում ծառը ռուսի ձեռքով տնկվում, չէ՞ որ Արծվաշենն ու էլի շատ տարածքներ հենց ռուսի ձեռքով ենք հանձնել: Եվ եթե էդ կեչին տնկելու տակ իմաստ չկար, թող ֆիլմում, օրինակ, Օբամայի բարեկամներից մեկը Աֆրիկայից գար ու պալմա տնկեր: Շատ վտանգավոր նախադեպ է ստեղծվում՝ ի՞նչ ասես կարող են պատմության տեղ հրամցնել»,- ասում է մեր զրուցակիցը: Նաեւ զարմանում է՝ այդքան հերոսներ ունենք, ինչու Մոնթեի ու մյուսների մասին լուրջ գեղարվեստական ֆիլմեր չեն նկարվում: Կամ՝ նրա խոսքով. «Տիգրան Պասկեւիչյանը ֆիլմ էր նկարել մարտի 1-ի մասին, ոչ մի տեղ չթողեցին ցուցադրվի, երբ որ իրական պատմություն էր, անկախ Հայաստանի ամենածանր օրերից մեկի մասին… Դա թողած, ինչե՞ր ենք քարոզում»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### Կստեղծվի արտերկրում սովորողների տվյալների բազա

Այս տարվա հունվարի 15-ից Հայկական գիտական համագործակցությունը (Armenian Scientific Cooperation) նախաձեռնել է արտերկրում կրթությունը շարունակել ցանկացող երիտասարդներին մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծրագիր: Ինչպես «Առավոտի» հետ զրույցում նշեց armscoop.com կայքի հիմնադիրներից Արմեն Մարտիրոսյանը, ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել Կրթական խորհրդատվական կենտրոն: Վերջինիս հիմնական նպատակն է անհատական խորհրդատվությունների եւ խմբային սեմինարների միջոցով տեղեկատվություն տրամադրել հայ ուսանողներին եւ երիտասարդներին աշխարհի տարբեր համալսարաններում առկա կրթաթոշակային ծրագրերի եւ այլ կրթական հնարավորությունների մասին: Անհատական խորհրդատվությունները, տեղեկատվական եւ կարողությունների զարգացմանն ուղղված խմբային սեմինարները, զանազան ծրագրերը կօգնեն ավելի լավ կողմնորոշվել կրթական շուկայում եղած բազմաթիվ ծրագրերում: Ծրագրի շրջանակներում Երեւանի եւ մարզերի բուհերի ուսանողները հնարավորություն կունենան դիմել Կենտրոնի խորհրդատուներին ու համապատասխան աջակցություն ստանալ փորձագետներից:

Ա. Մարտիրոսյանի խոսքով, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել արտերկրում սովորող հայ ուսանողների/շրջանավարտների տվյալների բազա եւ ցանց, որը կնպաստի արտերկրում սովորող հայ ուսանողների եւ Հայաստանում գտնվող դիմորդների միջեւ կայուն կապի հաստատմանն ու զարգացմանը: Հայաստանցի այն ուսանողները, ովքեր ցանկանում են ուսումը շարունակել արտերկրի տարբեր բուհերում, Կրթական խորհրդատվական կենտրոնի միջոցով հնարավորություն կստանան կապ հաստատելու աշխարհի լավագույն բուհերում սովորող ուսանողների կամ շրջանավարտների հետ, ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, թե ինչպե՞ս պետք է գրագետ մոտիվացիոն նամակ գրել, ի՞նչ նրբություններ պետք է հաշվի առնեն տվյալ բուհ դիմելու ժամանակ, համապատասխան կրթաթոշակային ծրագրերի առկայության մասին եւ այլն: Այդ ամենը լինելու է անվճար:

Ըստ մեր զրուցակցի, հարկավոր է ընդամենը տվյալները ուղարկել info@armscoop.com էլփոստին:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Գլխավոր մրցանակակիր նորարար ուսուցիչը կմեկնի Պորտուգալիա



«Մայքրոսոֆթ» ընկերությունը՝ ԿԳ նախարարության եւ «ՎիվաՍել- ՄՏՍ» ընկերության հետ համատեղ, «Գործընկերներ ուսման ոլորտում» ծրագրի շրջանակներում այս տարի երրորդ անգամ անցկացրեց «Նորարար ուսուցիչներ» ֆորումը, որի ընթացքում տեղի ունեցավ նորարար մեթոդներ կիրառող ուսուցիչների մրցանակաբաշխություն:

Ինչպես նշեց «Մայքրոսոֆթ» ընկերության տնօրեն Գրիգոր Բարսեղյանը, արդեն ավանդույթ դարձած ֆորումը տարեցտարի կրկնապատկում է ուսուցիչների հետաքրքրությունը մասնակցության հանդեպ. «Թող չլինի կարծիք, թե մեր դպրոցները հետ են մնացել տեղեկատվական տեխնոլոգիաներից: Պետք է հպարտանանք, որ իրենց աշխատանքին նվիրված ուսուցիչներ ունենք: Կրթությունն այն կարեւոր բնագավառն է, որտեղ պետք է ներդրվեն բոլորի ջանքերը»:

Այս տարվա մրցույթի գործընկեր «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի խոսքերով՝ պետք է զարգանալ առավել արագընթաց քայլերով, քանի որ ունենք ներուժ, որը պետք է օգտագործել. «Մեզանում սովորություն կա ասել, թե գիտենք ամեն ինչ, բայց պետք է յուրաքանչյուր օր սովորել եւ զարգացնել գիտելիքները: Կրթական հարթակը զարգանում է եւ պետք է հավատալ մեր երիտասարդներին»:

Ինչպես տեղեկացրեց ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը, նախարարության համար առաջնային է համարվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, ինչի կապակցությամբ վերջին 10 տարիների ընթացքում մեծ աշխատանքներ են արվել. մասնավորապես՝ էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում, ուսուցիչների վերապատրաստում, ուսումնական ծրագրերի վերանայում, որոնք վերահսկում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը: Ինչպես նշեց վերջինիս տնօրեն եւ մրցույթի գնահատման հանձնաժողովի նախագահ Արտակ Պողոսյանը, առավել մեծ թվով մասնագետներ կան, ովքեր պետք է ակտիվ լինեն, քանի որ ներկայացվել է ընդամենը 41 նախագիծ. «Պետք չէ կրկնօրինակել նախորդ տարվա հաղթողին: Նոր խոսք պետք է ասել, եւ ժյուրիի համար հետաքրքրական կլինի նոր նախագծերի քննարկումը»: Կրթական ծրագրերի ղեկավար Քրիստինե Գյոնջյանի տեղեկացմամբ՝ մրցույթի մասին Երեւանի եւ մարզերի դպրոցներին հայտարարվել է նախապես, եւ ուսուցիչները երկու ամիս պատրաստվելու ժամանակ են ունեցել. «Ներկայացված 41 նախագծերից եզրափակիչ փուլ են անցել 13-ը»:

Մրցանակաբաշխության ընթացքում «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի եւ «Մայքրոսոֆթ» ընկերության կողմից սահմանված գլխավոր մրցանակին արժանացավ Օհանյան կրթահամալիրի ներկայացուցիչ Աննա Գալստյանը՝ «Տիեզերքը շատ մոտ է» ծրագրի համար: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի կողմից սահմանված առաջին, երկրորդ եւ երրորդ մրցանակներին արժանացան համապատասխանաբար Օհանյան կրթահամալիրի ներկայացրած «Ճիշտը եւ սխալը», Վանաձորի թիվ 19 դպրոցի «Գիտելիքների գնահատման օնլայն համակարգ» եւ թիվ 13 ավագ դպրոցի «Կանոնավոր բազմանկյուններ եւ օնլայն թեստեր» ծրագրերը:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին տրվեց «Մայքրոսոֆթի» կողմից սահմանված հատուկ մրցանակ՝ էլեկտրոնային մատյանների կիրառության համար: Գլխավոր մրցանակակիրը մարտի 19-22-ը կմասնակցի Լիսաբոնում կայանալիք «Մայքրոսոֆթի» եվրոպական «Գործընկերներ ուսման ոլորտում» ֆորումին՝ իր նախագիծը ներկայացնելով միջազգային հանրությանը:

Ի դեպ, նախորդ տարվա հայաստանյան մրցույթի գլխավոր մրցանակակիր՝ ուսուցչուհի Նարինե Բաղդասարյանը եվրոպական ֆորումում եւս արժանացել է առաջին պատվավոր մրցանակին:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

VIVAcell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Մ17-ը սկսում է մրցաշրջանը




ՀՖՖ մամուլի քարտուղարությունը տեղեկացնում է, որ Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականն այս տարվա առաջին ուսումնամարզական հավաքն անցկացնելու է փետրվարի 11-16-ը Ֆուտբոլի ակադեմիայում՝ ՀՖՖ տեխնիկական կենտրոնում: Ֆեդերացիայի հավաքական թիմերի բաժինը Ֆեդերացիայի պաշտոնական կայքին իրազեկել է, որ հավաքականի մարզչական շտաբը՝ ավագ մարզիչ Ռոման Սիմոնյանի գլխավորությամբ, հրավիրել է հետեւյալ ֆուտբոլիստներին.

Դարպասապահներ.
Վոլոդյա Ավագյան
Միհրան Մնացականյան
Պաշտպաններ.
Վահան Ադլոյան
Խաչատուր Խաչատրյան
Դավիթ Մալխասյան
Հայկ Մարգարյան
Սերգեյ Ավետիսյան
Ռոբերտ Հակոբյան
Վարդան Խաչատրյան
Նարեկ Պետրոսյան
Արմեն Հովհաննիսյան
Կիսապաշտպաններ.
Արամ Սարգսյան
Ալիկ Առաքելյան
Նարեկ Ասլանյան
Արամ Քոչարյան
Ֆուրման Մելքոնյան
Նորայր Տիգրանյան
Գեղամ Թումբաքյան
Միքայել Խաշմանյան
Հարձակվողներ.
Էդուարդ Ավագյան
Հովհաննես Փափազյան
Ռազմիկ Հակոբյան
Սերոբ Հովհաննիսյան

Հրավիրված ֆուտբոլիստները ներկայացնում են Հայաստանի «Փյունիկ», «Բանանց», «Միկա», «Ֆուրման» ֆուտբոլային ակումբները, ինչպես նաեւ Մարսելի «Օլիմպիկը» եւ Իսպանիայի «Սեւիլիան»:

## «Զենիթը» սառնամանիքի պատճառով կիսատ է թողել «Չեզենայի» հետ խաղը

Եվրոպան պարուրած աննախադեպ սառնամանիքների պատճառով որոշ ազգային առաջնություններում խաղացանկի փոփոխություններ են կատարվել: Իսկ ահա Իտալիայում ուսումնամարզական հավաք անցկացնող Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» ֆուտբոլիստները, որոնք, թվում է, սովոր պետք է լինեն ռուսական ցրտերին, «Չեզենայի» հետ ընկերական հանդիպման 63-րդ րոպեին կիսատ են թողել պայքարը եւ հեռացել դաշտից: Նախաձեռնության հեղինակը եղել է պիտերցիների գլխավոր մարզիչ Լուչանո Սպալետին: Նա խորհրդակցել է մրցակից թիմի իր գործընկերոջ հետ եւ ստանալով նրա համաձայնությունը՝ կայացրել է այդ որոշումը:

## Ռուբեն Հայրապետյանը ֆուտբոլային տոն է պարգեւելու ֆուտբոլասերներին

Ինչպես հայտնի է, Ֆուտբոլի Հայաստանի գավաթի 2011/2012թթ. խաղարկության եզրափակիչ հանդիպումն անցկացվելու է ապրիլի 29-ին՝ Գյումրիում:

Անդրադառնալով փաստին՝ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը Ֆեդերացիայի պաշտոնական կայքին տված հարցազրույցում ասել է. «Որոշումն աննախադեպ չէ: Ֆուտբոլի երկրպագուները հիշում են, որ 2008 թվականին էլ գավաթի եզրափակիչն անցկացվել է Իջեւանում: Ֆուտբոլի համաչափ զարգացումը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի առաջնահերթություններից է: Ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացումը, ֆուտբոլային մթնոլորտը նաեւ մարզեր տեղափոխելը ֆուտբոլի զարգացման ուղղություններից մեկն է: Այս մեխանիզմը վաղուց կիրառվում է եվրոպական երկրներում: Նույնիսկ ազգային հավաքականների հանդիպումներն են մայրաքաղաքներից դուրս անցկացվում: Գավաթի խաղարկությունն այս անգամ անցկացնելով Գյումրիում եւ հանդիսավորապես բացելով վերակառուցված «Քաղաքային» մարզադաշտը՝ մենք մեծ ֆուտբոլային տոն ենք պարգեւելու ֆուտբոլի մեր երկրպագուներին: Բազմիցս ու տարբեր առիթներով ասել եմ, որ ամեն ինչ անելու եմ Գյումրիում ֆուտբոլի զարգացման համար»:

## Անի Ամիրաղյանը պայքարը շարունակելու է զուգախաղերում

Հայաստանի թիվ մեկ ռակետ Անի Ամիրաղյանն այսօր Շարմ էլ Շեյխում ընթացող 10 հազար դոլար մրցանակային ֆոնդով կանանց միջազգային մրցաշարի մենախաղերի առաջին մրցափուլում 1:6, 4:6 հաշվով պարտվեց Ավստրիայի ներկայացուցիչ Բարբարա Հաասին, որին երեկ զուգախաղերում, ընկերակցելով ռուսաստանցի Դիանա Իսաեւայի հետ, պարտության էր մատնել նույն հաշվով: Հայաստանի չեմպիոնուհին դուրս մնաց մենախաղերից, սակայն պայքարը շարունակելու է զուգախաղերում:

## Հրանտ Մելքումյանը հաղթանակ տարավ 75-րդ քայլում

Մոսկվայի «Կոսմոս» հյուրանոցում ընթացող շախմատի Aeroflot Open 2012 ներկայացուցչական միջազգային մրցաշարում երեկ երկրորդ տուրի օրն էր:

A խմբում հանդես եկող Հայաստանի երկու ներկայացուցիչներից համաշխարհային օլիմպիադայի հաղթող եւ աշխարհի թիմային չեմպիոն Վլադիմիր Հակոբյանը սեւերով հանդիպեց Մաքսիմ Ռոդշտեյնի հետ: Հայ գրոսմայստերը երկար պայքարեց մրցակցի շոշափելի առավելությունը չեզոքացնելու համար, սակայն հաջողության չհասնելով՝ 78-րդ քայլում ստիպված իրեն պարտված ճանաչեց:

Դրան հակառակ՝ տուրը հաջող ստացվեց գրոսմայստեր Հրանտ Մելքումյանի համար, որը նույնպես համառ պայքարում 75-րդ քայլում կարողացավ պարտության մատնել հնդիկ Գոպալին:

Անհաջողության մատնվեց նաեւ Ռուսաստանի դրոշի ներքո հանդես եկող Սերգեյ Գրիգորյանցը: Նա պարտվեց Հնդկաստանի մեկ այլ շախմատիստի՝ Նեգի Փարիմարջանին:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

# Փողոցում ավելի գրագետ են խոսում, քան Facebook-ում

## Այս կարծիքին է գրող, թարգմանիչ, հրատարակիչ, խմբագիր Վաչագան Սարգսյանը

«1922թ. բոլշեւիկներն ուզեցին ամբողջ սովետմիության ժողովուրդներին լատինատառ գրող դարձնել, ուղղագրական փոփոխություն անել եւ հայերին 1500 տարվա գրությունը մոռանալ տալ, բայց, բարեբախտաբար, այդպես չեղավ՝ հայերը շարունակեցին մեսրոպյան այբուբենն օգտագործել: Իսկ հիմա տեխնիկան, համակարգիչը եկել ու կարողանում է թելադրել իր կամքը»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց գրող, թարգմանիչ, հրատարակիչ, խմբագիր Վաչագան Սարգսյանը՝ խոսելով համացանցում օգտագործվող լեզվից, լատիներեն տառերից ու աղավաղված մայրենիից:

Ըստ Վ. Սարգսյանի՝ այժմ տեխնիկան թելադրող է դարձել, եւ դա մեր ապաշնորհության հետեւանքն է. «Ես ուսումնասիրեցի դաշտը. մարդկանց մի մասը պնդում է, որ ստիպված է լատինատառ գրում, քանի որ դրսից է գրում, հեռախոսով է գրում, հայկական այբուբեն չկա ձեռքի տակ եւ այլն. դա համարում եմ օբյեկտիվ, առարկայական պատճառ: Բայց կան մարդիկ, որոնք ուղղակի սովորել են լատինատառ գրել հայերեն ստեղնաշար չունենալու պատճառով, իսկ որոշներն էլ իրենց տառասխալները ցույց չտալու, կոծկելու համար են լատինատառ գրում»:

Մեր զրուցակցի փոխանցմամբ՝ այն, որ, օրինակ, Facebook-ում անգամ քաղաքական գործիչներն են լատինատառ գրում, նրանք ուղղակի խախտում են լեզվի մասին օրենքը, իսկ դա անընդունելի է: «Ցանկացած հրապարակային գրություն չպետք է աղավաղի հայերենը: Իսկ համացանցում գրածները հրապարակային գրություն են, որովհետեւ համացանցը ցանկացած թերթից, լրատվամիջոցից շատ բաժանորդներ, այսինքն՝ օգտատերեր ունի, ու այդ հրապարակային գրությունները եւս պետք է վերահսկվեն: Լեզվի պետական տեսչությանը պետք է հնարավորություն տրվի վերահսկել համացանցի լեզուն: Մայրենիի անաղարտության համար պետք է պայքարել կառավարական մակարդակով, որովհետեւ որեւէ անհատ, ինչքան էլ ցանկանա, միայնակ չի կարող: Համացանցը՝ Facebook-ը, արտաարգանդային հղիության պես մի բան է, որը խանգարում է հայոց լեզվի առողջությանը, բայց պետք է այնպես անել, որ կարողանանք բերել նորմալ վիճակի»,- ասում է Վ. Սարգսյանը՝ նշելով, որ հատկապես հայաստանաբնակներն իրավունք չունեն լատինատառ գրելու, աններելի է կամովին անցնել լատինատառի՝ այն դեպքում, երբ դրսում բնակվողների մեծամասնությունը նորմալ հայերեն չիմանալով՝ չի վախենում թեկուզ տառասխալներով հայատառ գրել:



Վ. Սարգսյանին զայրացրել է՝ «մարդ կա, ասում է՝ հայերեն տառերը գեղեցիկ չեն, այդ պատճառով էլ լատինատառ եմ գրում: Դա ծիծաղելի պատճառ է: Այսպես մտածողներն ուղղակի ուզում են իրենց անգրագիտությունը թաքցնել լատինատառ գրելով: Իսկ ամենավատն այն է, որ բոլշեւիկները ժամանակին չկարողացան ստիպել մեզ, բայց հիմա կամովին հանձնվում ենք լատինատառ գրելուն՝ մոռանալով, որ մեր լեզուն մեր ինքնության փաստաթուղթն է, եւ եթե հիմա փոխենք մեր ուղղագրությունը՝ վաղը դա հոգեբանորեն ազդելու է մեր երեխաների կրթական մակարդակի եւ հոգեբանության վրա»:

Վ. Սարգսյանը հայտնեց, որ, որպես կանոն, համացանցում չի կարդում լատինատառ գրությունները, ինչի մասին էլ որ լինեն. «Ահավոր վիրավորական է նաեւ այն, երբ Մայր Աթոռն է տոները լատինատառ շնորհավորում: Չէ՞ որ այժմ տեխնիկան թույլ է տալիս հայատառ հաղորդագրություններ ուղարկել: Գոնե եկեղեցին նման բան չանի: Ի վերջո մեր հայ եկեղեցու սուրբը՝ Մեսրոպ Մաշտոցն է ստեղծել մեր տառերը: Ես դա համարում եմ սրբապղծություն բառի բուն իմաստով: Եկեղեցին պղծում է Մաշտոցի արած գործը, մինչդեռ դրա իրավունքը չունի: Մենք մեր ունեցածը չենք հարգում, չենք սիրում մեր լեզուն»:

Վ. Սարգսյանի ձեւակերպմամբ՝ թե Facebook-ում, թե սոցիալական այլ ցանցերում կարծես թե վրեժ են լուծում մայրենիից: Նրա խոսքերով՝ զարմանալի է, բայց ատելություն կա սեփական լեզվի նկատմամբ. «Հայն ատում է իր լեզուն, իսկ դա ատելության դրսեւորումներից ամենացայտունն է: Facebook-ի լեզուն անհնար է կարդալ: Փողոցի ինքնահաստատվող երեխեքն ավելի են լավ խոսում, քան Facebook-ում իրենց բանաստեղծ, գրող ու քաղաքական գործիչ համարողները: Աղշում եմ այդ մարդկանց մտածողության վրա, նրանք իբր թե Խաչատուր Աբովյաններ են դարձել եւ ուզում են գրական լեզուն մոտեցնել ժողովրդին: Դա մեծագույն մոլորություններից մեկն է: Մենք պետք է կարողանանք ժողովրդի խոսակցական լեզուն տանել դեպի գրական լեզու՝ ոչ թե հակառակը: Ի վերջո՝ գրական լեզուն միակ զենքն է, որը շատ հղկված է ու փայլուն եւ կարող է ցանկացած իրողություն արտահայտել իրենով»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ